

Կանայք ագրոպարենային համակարգերում

Շատ աշխատավայրերում, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտում, կանայք ենթարկվում են թունունակ քիմիական նյութերի ազդեցությանը: Նրանք հաճախ տեղեկացված չեն լինում իրենց առողջության համար այդ նյութերի վտանգավորության մասին, որի արդյունքում ժամում են անիրագել նման ազդեցության հնարավոր հետևանքներին և չեն կապում հիվանդությունների առաջացումը դրանց հետ:

Կայք գյուղատնտեսության և պլաստմասսայի միջև

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության կարևորագույն ճյուղերից է: Հայաստանում իրենց ընտանիքի եկամուտն ապահովելու համար հողագործությամբ զբաղվում են ավելի շատ կանայք, քան տղամարդիկ: Ըստ Ասիական զարգացման բանկի 2019թ.-ի «Հայաստանում գենդերային իրավիճակի գնահատման» զեկույցի՝ Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի 90%-ը ստացվում է երկրագործությունից: Կանայք ներկայացնում են գյուղատնտեսության ոլորտում ներգրավված աշխատողների հիմնական մասը (53%):

Վերջին տասնամյակների ընթացքում պլաստմասսաները հայտնվել են որպես ժամանակակից գյուղատնտեսության կարևոր բաղադրիչ՝ առանցքային դեր խաղալով կայունության նպատակներին հասնելու գործում: Պլաստմասսան վտանգ է ներկայացնում մարդու առողջության համար իր կյանքի ցիկլի յուրաքանչյուր փուլում. հումքի արդյունահանման և արտադրության ժամանակ առաջանում են վտանգավոր քիմիական միացություններ, արտադրության ընթացքում պլաստմասսային ավելացվում են նոր թունունակ նյութեր, և երբ պլաստմասսան դառնում է աղբ, այն աղտոտում է շրջակա միջավայրը և սնունդը:

Թեև գյուղատնտեսությունում պլաստմասսայի օգտագործումը զգալի օգուտներ է բերում, առկա են մի շարք մտահոգություններ՝ կապված գյուղատնտեսական պլաստմասսային առնչվող ռիսկերի հետ: Ժամանակի ընթացքում, արևի ճառագայթների և քամու ազդեցության տակ մակրոպլաստմասսաները դանդաղորեն քայքայվում են՝ մասնատվելով ավելի փոքր կտորների՝ առաջացնելով 5 մմ-ից պակաս երկարությամբ միկրոպլաստմասսա և նանոպլաստմասսա:



Կան հստակ ապացույցներ, որոնք կապում են որոշակի քիմիական նյութերի ազդեցությունը մի շարք առողջական խնդիրների, ներառյալ հորմոնային համակարգի խանգարումների հետ: Նման խանգարումները կապված են նյարդային զարգացման խնդիրների, նյութափոխանակության խանգարումների, քաղցկեղի (հատկապես՝ լեյկեմիա), վերարտադրողական գործառույթի նվազման և գենետիկական մուտացիաների հետ:

Այս քիմիական նյութերից մի քանիսը կարող են ուղղակիորեն փաստել օրգանները՝ ժամանակի ընթացքում հանգեցնելով հիվանդության: Մյուսներն ընդհատում են կարևոր կենսաբանական գործընթացները՝ հաճախ ներառելով հորմոնները: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ պլաստմասսայում պարունակվող որոշ քիմիական նյութեր նմանակում են մարդու օրգանիզմում առկա հորմոններին՝ խաթարելով վերջիններիս գործառույթը: Պլաստմասսայում առկա քիմիական նյութերը կարող են առաջացնել այնպիսի առողջական խնդիրներ, ինչպիսիք են նորածնի ցածր քաշը և վաղաժամ ծնունդները, պտղաբերության խանգարումը, կրծքագեղձի քաղցկեղի ռիսկը և փոքր երեխաների ուղեղի զարգացման հետ կապված խնդիրները:

Այս տեսակի քիմիկատները, որոնք հայտնի են որպես էնդոկրին խաթարիչներ, նաև փոխել են հին պատկերացումներն այն մասին, թե ինչպես քիմիական նյութը՝ որոշակի չափաքանակից սկսած, վերածվում է թույնի: Թեև դա ճիշտ է որոշ տեսակի թունունակ նյութերի համար, էնդոկրին համակարգի գործառույթը խաթարող միացությունները, ինչպիսիք են բիսֆենոլները և ֆտալատները, կարող են երկարատև ազդեցություն ունենալ առողջության վրա նույնիսկ ցածր չափաքանակներով:

Ճտալատների ազդեցությունն առողջության վրա

Պլաստմասսան պարունակում է այնպիսի փասսակար մասնիկներ, ինչպիսիք են ֆտալատները և բիսֆենոլ Ա-ն (ԲՖԱ): Միչիգանի համալսարանի Հանրային առողջապահության դպրոցի գիտնականների թիմն ուսումնասիրել է ֆտալատների ազդեցությունը կանանց առողջության վրա: Հետազոտությունների շնորհիվ արդեն ապացուցվել է, որ գոյություն ունի կապ ֆտալատների և պտղաբերության նվազման միջև: Պարզվել է նաև, որ ֆտալատները մեծացնում են շաքարախտի զարգացման ռիսկը մոտ 63%-ով:

Բիսֆենոլ Ա-ի ազդեցությունն առողջության վրա

Բիսֆենոլ Ա-ն արդեն 50 տարի օգտագործվում է որպես կարծրացնող նյութ՝ պլաստմասսայի և պլաստմասսայից պատրաստված արտադրանքների արտադրությունում: Քանի որ բիսֆենոլ Ա-ն կառուցվածքով նման է էստրոգենին (հիմնականում կանանց բնորոշ հորմոն), այն ունի էնդոկրին համակարգի հետ փոխազդելու հատկություն: Օրգանիզմի վրա բիսֆենոլի ազդեցության վտանգավոր հետևանքներից է դրա բացասական ազդեցությունը պտղաբերության վրա:



Կանայք ամեն օր շփվում են ավելի քան 200 վտանգավոր քիմիական նյութի հետ:
Պլաստմասսայի խնդիրը մեր ժամանակի ամենամեծ բնապահպանական խնդիրներից է:
Անհրաժեշտ է գտնել լուծումներ, որոնք համատեղում են բնապահպանական և գենդերային
նկատառումները՝ հանուն ներկա և ապագա սերունդների առողջության:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Մեկանգամյա օգտագործման պլաստմասսե արտադրանքների անվտանգ այլընտրանքները Հայաստանի փոքր ֆերմերային տնտեսություններում» ծրագրի շրջանակում:

«Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Շինարարների փող. 18, բն. 52
Էլ. փոստ՝ info@ruraldaf.am
Վեբ կայք՝ <http://www.ruraldaf.am>